ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 7 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 3-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի հունվարի 5-ի «Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում մրցութային հիմունքներով դիմորդների ընդունելության և վերապատրաստման անցկացման կարգը սահմանելու մասին» թիվ 3-Լ հրամանի Հավելված 3-ում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները՝

1) Հավելվածի 8-րդ կետի 10-րդ ենթակետը «հետևանքների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ուսումնառությունը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ լիցենզավորված բժշկական կազմակերպությունում ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և

մեթամֆետամին) անցնելու պարտականության և այդ ստուգման դրական արդյունքի իրավական հետևանքների» բառերով.

2) Հավելվածի 20-րդ կետը «տեղերը» բառից հետո լրացնել «՝ ըստ դիմումում նշված երկու հայտերի հերթականության» բառերով.

3) Հավելվածի Ձևը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Տեղեկացված եմ նաև, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ընդունվելու դեպքում ուսումնառությունը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում պարտավոր եմ լինելու լիցենզավորված բժշկական կազմակերպությունում իմ հաշվին անցնել թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և մեթամֆետամին), և այդ ստուգման դրական արդյունքի դեպքում ազատվելու եմ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրից:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
10.01.2024թ.

Վահե Ղազարյան